

ԴԱՐՈՒՍ ԶԱԽԱԿԸ

Ա Ր Ծ Ի Ի Ե Ա Ն Ի

Ծնեց նա ի զուր, ապրեց անօգուտ,
Թշնամի դարձաւ սուրբ ճշմարտութեան.
Պաշտեց նա խաւար, խօսեցու միշտ սուտ,
Խեղճելով իւր մէջ խղճի արդար ձայն:

Ի՞նչ էր բարութիւն, խընամք, գութ, փրկանք,
Սէր գէպի աղքատն—այդ նա չը գիտէր.
Նորա շար սիրտը զգում էր հրճանք,
Տեսնելիս տանջող բիւր անմեղ զոհեր...

Եւ կնքեց նա իւր կեանքը երկրաւոր՝
Ամբարշտութեան դրոշմը ճակատին.
Նա մեռաւ որպէս խարդախ, նենգաւոր,
Որպէս հալածիչ ազնիւն ու բարին...

Բայց մարդկութիւնը հոգով ստրկացած,
Խորին կսկիծով սգաց այդ վախճան.
Եւ գարուս ոգով իսպառ կուրացած,
Նւիրեց նրան փառաշուք արձան...